



ՍՈՒՐԲ ԽԱՉ ԿԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

HOLY CROSS ARMENIAN CHURCH

318-27 STREET, UNION CITY, N.J. 07087

201 864-2480

29257

REV. FR. DIRAN PAPIAZIAN, Pastor

5 Փետրուար, 1986

Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան,
Առաջնորդ,
Նիւ Եորք, Ն. Ե. ,

Գեր. Սրբազան Հայր,
Համաձայն Թեմական Կանոնադրութեան՝ ծխական համայնքիս Տարեկան Անդամական Ժողովը կայացաւ 2 Փետր. 1986-ին, յաւարտ կիրակնօրեայ պաշտամունքին, մեր նախագահութեամբ, եկեղեցւոյս կեդրոնի սրահին մէջ:

Եկեղեցւոյս 105 տրատու իրաւատու անդամներէն 55 հոգի մասնակցեցան Տարեկան Ժողովին, եւ որով ժողովը օրինաւոր համարուեցաւ:

Սոյն ժողովին մէջ, ընթացիկ աշխատանքներու կարգին, ինչպէս՝ տարեկան գեկուցումներ՝ Հովուի, ծխական Խորհուրդի եւ Օժանդակ կազմակերպութեանց, պիտոճէի նկատառում եւն., նմանապէս նաեւ կատարուեցան ընտրութիւններ՝ ծխական Խորհուրդի - մասնակի 5 հոգի -, Ընտրողական եւ Հաշուեքննիչ Յանձնախումբերու - Յ-ական հոգի -:

Ծխական Խորհուրդի 1986 տարուոյ ներկայացուած երկպատիկ ցանկին վրայէն կատարուած քուէարկութեան արդիւնքը եղաւ հետեւեալը.-

ՐԻՉԱՐՏ ՊՕՅԱՃԵԱՆ	51	քուէ
ԱՆԻ ՏԷՏԷՅԵԱՆ	49	,,
ԿԷՐԻ ՔԻԻԼՀԱՆՃԵԱՆ	37	,,
ԿՐԷԿՕՐԻ ԶԱՐԻՖԵԱՆ	32	,,
ՆՈՒՊԱՐ ՏՕՐԵԱՆ	31	,,

Վերոյիշեալ ցանկը կը ներկայացնենք Ձերդ Սրբազնութեան առ ի վաւերացում, եւ կը յուսանք որ անյապաղ կը վաւերացնէք զայն, որպէս զի ձեր հայրախնամ օրհնութեամբ՝ նորընտիր ծխական Խորհուրդը նոր ոգեւորութեամբ անարգել լծուի իր աստուածահաճոյ գործին, վասն պայծառութեան սուրբ եկեղեցւոյս եւ ի փառս Ամենակալին Աստուծոյ:

Մամբ Ձերդ Խոնարհաբար,
Աղօթակից,
S. S. S. S.
S. Տիրան Ա. Բինյ. Փափագեան,
Հովիւ